

[illegible]

ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏԻ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ

Հանրապետության նախագահ զոր. Էմիլ Լա-հուտ երէկ առաւօտ իր հիւրերը՝ նախագահական ամարանոցին՝ Պէյթէյտ-տինի պալատին մէջ ընդունելէ ետք, Պաապուս-յի նախագահական պալատին մէջ ընդունեց հա-րաւային Լիբանանի մէջ ՄԱԿ ընդհանուր քար-տուղարի ներկայացուցիչ Սթեֆան Տը Սիթուրան:

Նախագահ Լահուտ հաւաստեց, որ Լիբանան-նի ցամաքային, օդային կամ ծովային սահմաննե-րու իսրայէլեան ամէն խախտում Լիբանան կը համարէ իր գերիշխանու-թեան դէմ ոտնձգութիւն, որուն պատասխանա-տուութիւնը կ'իյնայ իս-րայէլի ուսերուն: Ան պա-հանջեց, որ ՄԱԿ սահմա-նին վրայ տիրող վիճա-կին հետեւած ատեն նկա-տի ունենայ Լիբանանի աշխ կեցողութեամբ:

Տը Սիթուրան նախա-գահ Լահուտի հետ տե-սակցութիւն մը խնդրած էր՝ անոր փոխանցելու համար արդիւնքները իս-րայէլացի պաշտօնատար-ներու հետ իր հանդի-սուածներուն, որոնց առանցքն էր իսրայէլեան օդուժի կողմէ Լիբանանի օդային սահմաններու յաճախակիօրէն խախ-տումը:

ՄԱՀԱԶԴ

ԼՕԽի «Աշխէն» մասնաճիւղը կը գուժէ իր ընկերութիւններէն՝

ԺԱԳԼԻՆ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 26 Յունիս 2001ին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Իսկուհի Գենտիրեան Տէր եւ տիկին Սարգիս Խաչատուրեան եւ զաւակունք Գենտիրեան ընտանիք Արթիւնեան ընտանիք Թուրքիայի ընտանիք Խաչատուրեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց աղջկան, քրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

ԼՈՒՍԻՆ ԳԵՆՏԻՐԵԱՆԻ (Ծնեալ՝ Պէյրութ, 1960ին)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 29 Յունիս 2001, կէսօրէ ետք ժամը 2:00ին, իր բնակարանին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 30 Յունիսին, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Ման-կանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզ-մանատանը:

● Ներկայս ընդունել իբրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցե-ալին բնակարանը Պուրճ Համուտ, Եալիկին Ս. Պո-ղոս Երազմանցի շէնք, Տրդ յարկ, քիւ. 17, Շաբաթ 30 Յունիսին, Կիրակի 1 եւ Երկուշաբթի 2 Յունիսին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սիրուհի Թապաբեան եւ զաւակը Գէորգ Տէր եւ տիկին տղթ. Յովհաննէս Թապաբեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Կարօ Անտոնեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Գէորգ Գազանեան եւ զաւակունք Թապաբեան ընտանիք Իսթանբուլ ընտանիք Անտոնեան ընտանիք Գազանեան ընտանիք Աշգարեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուս-նոյն, հօր, մեծ հօր, հօրեղորք եւ հարազատին՝

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱՍԼԱՔԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 26 Յունիս 2001, երեկոյեան ժամը 8:00ին, իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատար-ւեցաւ Ուրբաթ, 29 Յունիս 2001, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Այնճարի Հայ Կաթողիկէ Ս. Աստածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փո-խադրուեցաւ Այնճարի գերեզմանատանը:

● Ներկայս ընդունել իբրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հան-գուցեալին բնակարանը, Այնճար, Ուրբաթ 29 եւ Շաբաթ 30 Յունիսին եւ Կիրակի 1 Յունիսին:

● Կիրակի 1 եւ Երկուշաբթի 2 Յունիս պաւկին՝ Յովհաննէս Թապաբեանի բնակարանը, Տրպ-պայէ:

Տը Սիթուրան յայտ-նեց, որ Իսրայէլի պաշտ-պանութեան նախարար Պենիամին Պէն Էլիզաբար հաւաստած է, թէ նա-խանցեալ օր վերջ դրուած է Լիբանանի վերեւ իսրա-յէլեան օդուժի թռիչքնե-րուն:

Իսրայէլի մէջ խօսակ-ցութիւններու անկեղծ, ուղղակի եւ դժուար էին, եւ անոնց ընթացքին իս-րայէլեան իշխանութիւն-ներէն ու պաշտպանու-թեան նախարարէն պա-հանջեցի վերջ դնել այս թռիչքներուն, մանա-ւանդ գրգռիչ ընդլստա-ցող եւ գերիշխանութեան խախտում՝ նկատուող Պէյրութի եւ զլիսաւոր քաղաքներուն վերեւ ձայ-նի պատը կտրելը, ըսաւ ան:

Իսրայէլի պաշտպա-նութեան նախարարին խօսքը լուրջ կը նկատեմ, որովհետեւ բերանացի փոխանցում ըլլալով հան-դերձ յստակ եւ վճռական էր, ըսաւ Սիթուրան, դի-տել տալով, որ ապագայի իրադարձութիւնները ցոյց պիտի տան անոր հա-ւաստութիւնը:

ՊԵՅՈՒԼՏՏԻՆԻ ՄԷԶ

Նախագահ Լահուտ երէկ առաւօտ Պէյթէյտ-տինի մէջ ընդունեց Յու-

նաստանի արտաքին գոր-ծոց նախարար Ժորժ Սա-ֆալիտէսը, վերահաստա-տելով, թէ Լիբանան կառ-չած կը մնայ արդար, ամ-բողջական եւ վերջնական խաղաղութեան ընտրա-քին, որովհետեւ ան է, որ կայունութիւն եւ ապա-հովութիւն կրնայ չնոր-հել չընդնին ու անոր բնա-կիչներուն:

Լիբանան կը բաժնէ Յունաստանի այն համո-գումը, թէ անհրաժեշտ է վերակենդանացնել իս-րայէլութեան գործընթա-ցը, իսրայէլեան բռնա-րարքներուն պատճառով անոր սառնեցումէն ետք, ըսաւ ան, ողջունելով չըջանին մէջ յունական գիւնադադարութեան շար-ժուածները եւ մարթելով, որ Աթէնք եւ Երուսա-կան Միութիւնը գործօն դեր կ'ունենան խաղա-ղութեան գործընթացին մէջ:

Յոյն պաշտօնատարը նախագահ Լահուտի ներ-կայացուց չըջանին մէջ իր չըջապտոյտին նպատակ-ները եւ քննարկուեցան երկկողմանի յարաբերու-թիւններն ու նախագահ Լահուտի Հոկտեմբերին Աթէնք տալիք պաշտօնա-կան այցելութեան նախա-պատրաստութիւնները:

Հանրապետութեան նախագահը երէկ նաեւ ըն-դունեց այցելութիւնները երեսփոխաններ Հիւսէյն Հաֆ Հասանի եւ Սամիր Ազարի, ինչպէս նաեւ նախկին երեսփոխաններ Միշէլ Խուրիի, Մահմուտ Աուատի, Հիւսէյն Եաթի-մի եւ Օկիւսթ Պախոսի հետ:

ԱՐԴԵՆ ԿԸ ԳՈՐԾԷ

www.homenetmentcentral.com

Շ. Ս. Ը. Ս.ի Կեդրոնական Վարչութեան համացանցի կայքը:

ԱՐՑԱԽԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

● Մարտիրոս Թապաբեանի եւ Քնար Գարա-գաշեանի մահուանց առիթով.
Տէր եւ տիկին Հրայր Տէր Թորոսեան՝
100 հազար լ. ո.

ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳ

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷԶ

Այսու ուրախութեամբ կը տեղեկացնենք հա-ւատացեալ ժողովուրդին, թէ յառաջիկայ Կի-րակի, 1 Յունիս 2001ին, Անդրանիկ պատա-րագ պիտի մատուցանէ՝

ԱՐԺ. ՏՐԴԱՏ ԲՅՆ. ԹԱՇՇԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողո-վուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարա-գին եւ հաղորդուելու օրուան խորհուրդով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄԱՀԱԶԴ

Տօթթ. Ասրինէ Գարագաշեան Տիկին Հերմինէ Պապիկեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Նազօ Գարագաշեան Տէր եւ տիկին Բաֆֆի Գարագաշեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ռուբէն Գարագաշեան Տէր եւ տիկին Տանըլտ Պապիկեան եւ զաւակունք Տիկին Քնար Ենովեան Տէր եւ տիկին Պերճ Ենովեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Հրաչ Ենովեան եւ զաւակունք Գարագաշեան ընտանիք Հայաճեան ընտանիք Եսայեան ընտանիք Արզումանեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, հօրաքրոջ եւ հարազատին՝

ԵՆԱՐ ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻ

(Ծնեալ՝ ԵՆՈՎԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Երուսաղէմի մէջ:
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատար-ւեցաւ Երեքշաբթի, 19 Յունիս 2001ին, Երուսաղէմի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ:

● Ներկայս ընդունել իբրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Նազօ Գա-րագաշեանի բնակարանը, Թապարիս, Շրհատէ փո-ղոց, «Jardin De Tabaris» շէնք, bloc D, 6րդ յարկ, Ուրբաթ 29 եւ Շաբաթ 30 Յունիսին:

Մարտի գեսպան Ապ-տէլ Ժալիլ Ֆանժիրօ նա-խագահ Լահուտի հետ քննարկեց անոր Ռապաթ այցելութեան արդիւնք-ներն ու լիբանանեւմա-րոքեան գերագոյն յանձ-նախուժման գործունէու-թեան գարկ տալու միջոց-ները:

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց հա-բուսայի գործադիր ընդհա-նուր քարտուղար Մեր-վէթ Թիլաուին:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՄ ՆԱԽԱԳԱՇԻՆ ՍՕՏ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յով-նանեան երէկ «Ինքնա-շարժներու եւ գրօնաշըր-ջութեան լիբանանեան ակումբ»-ի նախագահ Ֆուատ Խալէֆի եւ ակումբի վարչութեան անդամներուն ընկերակ-ցութեամբ այցելութիւն մը տուաւ հանրապետու-թեան նախագահ զոր. Էմիլ Լահուտի՝ Ներկայ էին նաեւ ինքնաշարժնե-րու «Ռալի»ներու միջազ-գային յանձնախումբի հինգ ղեկներ, որոնք պի-տի հետեւին «Ռալի»նե-րու Միջին Արեւելքի ախոյեանութեան ծիրէն ներս երէկ գիշեր սկսած Լիբանանի «Ռալի»ին:

Հանդիպումին խօս-ւեցաւ 2002ին աշխարհի «Ռալի»ներու ախոյեա-նութիւնը հիւրընկալելու Լիբանանի թեկնածու-թեան եւ այս նպատակին հասնելու անհրաժեշտ նախապատրաստութիւն-ներուն մասին:

«ՄԻՏՐԼ ԻՍԹ»Ի ՀԱՐՅԻՆ ԳԾՈՎ ԺՈՂՈՎՆԱԽԱՐԱՐ ԲԱՆՍՈՅԻ

«Միտրլ Իսթ» օդա-նաւային ընկերու-թեան հարցը երկխօ-սութեամբ լուծելու ճի-գերուն ծիրէն ներս երէկ աշխատանքի նախարար Ալի Քան-սօ նախագահեց իր գրասենեակին մէջ գումարուած ժողովի մը, որուն ներկայ գտնուեցան «Միտրլ Իսթ»ի աշխատատե-րներու եւ պաշտօնեա-ներու, օդաչուներու եւ հիւրընկալողներու սենտիքաներու ներ-կայացուցիչները, «Միտրլ Իսթ»ի վարիչ խորհուրդի նախա-գահ Մոհամէտ Հուր, աշխատաւորական ընդհանուր համա-դաշնակցութեան նա-խագահ Ղասան Ղը-սըն եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի տնտեսական հարցե-րու խորհրդական Ղա-լի Եուսէֆ:

Նախարար Քանսօ յայտարարեց, թէ երե-կոյեան հանդիպում մը պիտի ունենայ օդաչուներու սենտի-քային հետ:

Ան ըսաւ, որ հանդի-պումին տիրած է դրա-կան մթնոլորտ եւ յա-ջորդ հանդիպումնե-րուն պիտի քննար-կուին աշխատանքի նոր պայմանները. Քանսօ յայտնեց, որ երէկուան ժողովին մանրամասնութիւն չէ քննարկուած. այլ երեք սենտիքաները ներկայացուցած են իրենց տեսակետները:

Բոլոր կողմերը դրա-կանօրէն կը վերաբե-րին եւ երկխօսութեան պատրաստ են, ըսաւ նախարարը, ընդօժե-լով, որ ընկերութեան սնանկացումը յայտա-րարելու հարց չկայ:

Հուր ժողովէն ետք ըսաւ, որ երկխօսու-թեան դուրք բաց պի-տի մնալ. եւ վստահե-ցուց, որ աշխատանքի նոր պայմանները չեն հակադրուիր աշխա-տանքի օրէնքի տրա-մադրութիւններուն: Ան նաեւ ըսաւ, որ պատրաստ է լսելու այդ պայմաններուն առնչութեամբ կար-ծիքներ, այնքան ատեն, որ ընկերու-թեան մրցակից դառ-նալու կարողութեան վնաս չեն հասցներ, որպէսզի ընկերու-թիւնը կարենայ շա-րունակել գործունէու-թիւնը:

Ղըսըն հաւաստեց, որ բանակցութիւնե-րը կը շարունակուին. հետեւաբար առկախ կը մնայ «Միտրլ Իսթ»ի սենտիքաներու գործադուրը:

«Միտրլ Իսթ»ի աշ-

ԱՆՋՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

● Օլիցնակարգի աշա-կերաններու համար. հեռ.՝ 04-541 298:

ԿՈՒՉՈՒԻ

● Քժիշկի օգնական փոր-ձառու քարուղարուի մը: Հեռ.՝ 01-262795 եւ 03-307129:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Զնար Գարագաշեանի եւ Մարտիրոս Թապաբե-անի մահուանց առիթով, տե-ր եւ տիկին Յակոբ Եափու-ճեան 100,000 լ. ո. Համազ-գայինի Կեդրոնական Հիմ-նադրամին:

խատաւորներու եւ պաշտօնեաներու սեն-տիքային նախագահ Հիւսէյն Ապաս ըսաւ, որ սենտիքաները կը սառեցնեն իրենց բո-լոր բողոքի շարժում-ները, եւ նկատի առած ժողովին տիրած դրա-

կան մթնոլորտը, նստացոյցերը կ'առ-կախուին մինչեւ Եր-կուշաբթի օր, երբ աշ-խատանքի նախարա-րութեան հետ պիտի քննարկուի բանակ-ցութիւններու ընթաց-քը:

ԺԸՆԵԻ ԿԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԱԽԱՐՏԵՑԱԻ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ժընեի մէջ կազմակերպած հայ եկեղեցւոյ հոգեւոր մշակոյ-թին նուիրուած համագումարին մասնակցողները, Ուրբաթ, 29 Յունիս 2001ին, այցելեցին Եկեղեցինե-րու Համաշխարհային Խորհուրդի Ժընեի կեդրոնա-րու Հայոցաշխարհային համագումարին աշ-տեղին, ուր շարունակուեցան համագումարին աշ-խատանքները: Ներկայ հայ թէ օտար հայազանե-րուն իր ողջոյնի խօսքը ուղղեց Ե. Հ. Խորհուրդի ընդհանուր քարտուղար զոկտ. Քոնրատ Ռայզլը: Ժողովականութեան անունով խօսք տուաւ Մեկա խորհեան եւ յանուն համագումարի մասնակիցնե-րուն հայկական ձեռագործ մը նուիրեց Ե. Հ. Խոր-հուրդին:

Արամ Ա. կաթողիկոս եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ շեշտելով, թէ հայ եկեղեցին պէտք է աւելիւմ դառնայ ժողովուրդին եկեղեցին, դուրս գայ հաստա տութեան սահմաններէն ու դառնայ կենդանի ներ-կայութիւն ժողովուրդի կեանքին մէջ: «Հայ եկեղեց-ւոյ դիմաց կանգնող մեծագոյն անբաժանելի հայ եկեղեցւոյ վերանորոգումն է, անոր բարեկարգումը, որ պէտք է ընդգրկէ մեր եկեղեցւոյ համայնական կեանքը», ըսաւ ան:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀՐԱԻԵՐ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՍՏԵՓԱՆ ԵՒ ԱՐԺԻ ԹԻԹԻՉԵԱՆՍ

ՍԻՐՈՎ ԿԸ ԻՐԱԽԻՐԵՆ ԱԳԳԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄ-

ՆԵՐԸ ՆԵՐԿԱՅ ԳԱՌՈՒԵԼՈՒ ԻՐԵՆՑ ԳԱԼԱԿՆԵՐՈՒՄ

ՎԻԳԵՆԻ ԵՒ ՎԵՐԱՅԻ

Ս. ՊԱՍԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 1 Յունիս 2001ին երկկոյեան ժամը 5:00ին,

Ուրբանակաւ եկեղեցւոյ մէջ, 151 King Edward Ave. London, ONTARIO

Կնքահայրութեամբ՝ ՊՐ. ՐԱՅԳԻ ԹԻԹԻՉԵԱՆԻ Կնքամայրութեամբ՝ ՕՐԴ. ԱՐԻՆ ԶԱՊՈՒՐԵԱՆԻ

Ներկայս ընդունել իբրեւ անձնական հրաւեր Ընդունելութիւն՝ երկկոյեան ժամը 7:30ին London Ukrainian Center, 247

Adelaide St. S. London. ONTARIO

Fax. (519) 685 0115

ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷԶ

Ուրախութեամբ կը յայտնենք մեր սիրելի ժողովուրդին. թէ Կիրակի, 1 Յունիս 2001ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ իր Անդրանիկ պատարագ պիտի մատուցանէ եւ քարույք՝

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՑ Տ. ՄԿՐՏԻՉ

ԲՀՆ. ԲԵՇԻՇԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու եւ հաղորդը-ւելու օրուան Ս. Խորհուրդով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԷ ԱՅՂԱՆԻՍՏԱՆԻ ԹԱԼԵՊԱՆՆԵՐԸ

ԻՍԼԱՄԱՊԱՏ, 29 (ՌՈՅԹԸՐԶ)․– Միացեալ Նախագներ պուշացուցին Աֆղանիստանի Թալեպան իսլամական շարժումը, դիտել տալով, որ անհկա պիտի կրէ պատասխանատուութիւնը ամերիկեան թիրախներու դէմ Ուսամա Պըն Լատէնի կողմէ գործուած որեւէ յարձակումի, յայտնեց Թալեպանի դեսպանը Փաքիստանի մէջ։

Մոլլա Ապտէլ Սալամ Չալիֆ ըսաւ, որ պուշացումի հրաւերը իրեն փոխանցուած է Փաքիստանի մէջ ամերիկացի դեսպանին կողմէ։ Ամերիկացի դեսպանը՝ Ուիլիըմ Միլամ մեկնաբանութիւն չկատարեց Չալիֆի հրապարակած յուրին մասին։

Չալիֆ դիտել տուաւ նաեւ, որ ամերիկացի դեսպանը մտահոգութիւն յայտնած է ամերիկեան թիրախներու դէմ Պըն Լատէնի կողմէ յարձակումներու սպառնալիքին մասին։ Միլամ ըսած է նաեւ, որ որեւէ յարձակումի պարագային պատասխանատու պիտի նկատուի Քապուլի մէջ իշխող Թալեպանը։ Չալիֆ աւելցուց, որ ինք վստահեցուց Միլամը, թէ Թալեպան թէեւ ապաստան տուած է Պըն Լատէնի, բայցեւայն պիտի չարտօնէ անոր, որ յարձակումներ գործէ ամերիկեան շահերու դէմ։



Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱԾԻՒՂ

ԱՆՂԱՍԱԿԱՆ ԸՆԴՀ.ԺՈՂՈՎ (Բ.ՆԻՍ)

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 3 Յուլիս 2001, երեկոյեան ժամը 8:00ի՞ն. «Ագիրեան» ակումբին մէջ։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՐԳԱՐԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ԱՏԱՆԱ ՇԵՈ. 01 261622
2001 2002 ՏԱՐԵՐԶԱՆ

Ա. Ըինթ թէ նոր աշակերտներուն արձանագրութիւնը, Երկուշաբթին Ուրբաթ, կը շարունակուի ամէն օր, մինչեւ 25 Յուլիս 2001, կէսօրէ առաջ ժամը 8:30էն 12:30։

Բ. Ձեղչի դիմումագիրը հարկ է ամբողջացընել մինչեւ 25 Յուլիս 2001 եւ յանձնել տնօրէնութեան։

Գ. Վարժարանս օժտուած է «մանկամտուրով» ուր կ'ընդունինք մեկուկէս տարիքը բոլորած մանուկներ։

Դ. Վարժարանս ունի «*օթըար*»ի սպասարկութիւն։

Յուելեալ մանրամասնութեանց համար դիմել տնօրէնութեան։

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶԻ ԱՆՎՃԱՐ ԴԱՍԸՆԹԱՑԸ

ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՅԻԱ ՅԱԿՈՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՈԼԵԾ

Ա. եւ Բ. Հանգրուան

Ակգալին Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քուլէճը ուրախութեամբ կը յայտարարէ, որ վարժարանին *Կիւլպէնկեան Համակարգիչի Կեդրոնին* մէջ հաստատած համակարգիչի անվճար դասընթացքի Ա. հանգրուանը 6 շաբաթներու վրայ աւարտած է Երեքշաբթի, 19 Յուլիսին։ Այս դասընթացքին մասնակցած է 100 հոգի։

Ա. եւ Բ. հանգրուաններու նոր շրջանի դասաւանդութիւնները կը սկսին Երկուշաբթի, 2 Յուլիս 2001ին եւ տեղի կ'ունենան Երկուշաբթի, Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի օրերը, կէսօրէ առաջ ժամը 10:00էն 11:30 եւ կէսօրէ ետք ժամը 4:00էն 8:30, տարբեր դասարաններով։

Խորաքանչիւր դասարան կը բաղկանայ 17 հոգիէ։

Արձանագրութիւնները կը կատարուին քուլէճի քարտուղարութեան մօտ, Հինգշաբթի, 21 Յուլիսէն սկսեալ, ամէն օր, առաւօտեան ժամը 9:00էն 12:00։

Ա. հանգրուանին կը դասաւանդուին հետեւեալ նիւթերը․–

- Introduction to Computers
- Introduction to Windows (Operating system)
- Microsoft Word
- Microsoft Excel
- Introduction to Internet

Բ. հանգրուանին կը դասաւանդուին հետեւեալ նիւթերը․–

- Microsoft Word Level II
- Microsoft Excel Level II
- Microsoft PowerPoint
- How to use Internet

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԼԱ ՀԷՅԻ ՄԷԶ ՄԻԼՈՇԵՒԻՉ ՅԱՌԱԶԻԿԱՅ ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՆԱՅ ԴԱՏԱՐԱՆ

ՄԱԿԻ Լա Հէյի պատեբազմական ոճիրներու առեանը երէկ Միլպոտան Միլոշեւիչի հրահանգած է յառաջիկայ Երեքշաբթի օր առեան ներկայանալ յետու համար իրեն դէմ ուղղուած ամբաստանութիւնները՝ տասնամեակ մը առեած Պալքանեան պատերազմներու ընթացքին, որոնք հարիւր հազարաւորներու կեանք իյած են։

Ետեկոսյաւիոյ նախկին նախագահը, որ Լա Հէյի մէջ արդարաւիշուած է, բժշկական նախնական քննութեան մը ենթարկուած է, առաւօտեան ժամերուն Շեհենկէկէնի բանտը հասնելէ ետք։

Անոր փաստարաններէն մէկը յայտնած է, որ ան երէկ կապի մէջ մօտած է իր ընտանիքին հետ եւ փաստարաններու իմբակ մը նշանակած է՝ գինք պաշտպանելու համար իրեն դէմ ուղղուած ամբաստանութիւններէն։

Փաստարանը յայտնած է, որ Միլոշեւիչ ըսած է, թէ ինքզինք յանցաւոր չի նկատեր երբեք, որովհետեւ իր քաղաքականութիւնը սերտ ժողովուրդին շահերը պաշտպանելու համար եղած է։

ՄԱԿԻ առեանը Մայիս 1999ին դատապարտած էր Միլոշեւիչը, գայն պատմականաւոր նկատելով Քոսովոյի մէջ ալպանախոսներու հաւաքական սպանութիւններուն եւ արտաքսումներուն։

Ան պիտի դառնայ առաջին նախագահը, որ պիտի դատուի ոճիրներու համար, զորս գործած է պաշտօնի վրայ գտնուած ընթացքին։

Դատախազներ կը ծրարեն նաեւ գայն ամբաստանել Պոսիլոյ եւ Խրուսթիոյ մէջ գործուած ոճիրներով։ Նախկին ետեկոսյաւ այս հանրայնութեանց անջատումը չորս տարուան պատերազմի մը դուր րաւցած է եւ 200 հազար ցոսխած։

Միլոշեւիչի Ետեկոսյաւիոյ իշխանութիւններէն կ'ապահովուէր իրենց կողմէ յանձնուած թափառողութեան Պեկրատան յոյսերուն հետ հարաւորութեան մէջ յետ ցնցումներ յառաջացուցած է երէկ, բարեկարգչականներու միջեւ եւ անոնց դաշնակիցներուն հետ տարակարծութիւնները աւելի եւս խորացնելով։

Դաշնակցային կառավարութեան կրտսեր անդամները, որոնք կ'ընդդիմանային Միլոշեւիչի յանձնումին, յայտնած են, որ արտօնած են Ետեկոսյաւիոյ վարչապետ Ջորան Ճինճիչի, որ հրաժարի Արդարեւ, ան երէկ հրաժարեցաւ, կառավարութեան տապալումը պատճառելով։

Նախագահ Վոյսլաւ Քոշթունիցա Նոյնպէս խստիւ քննադատած է սերպական իշխանութիւններուն կողմէ Միլոշեւիչը յանձնելու որոշումը։

Ինքնին Քոշթունիցա-

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՎԵՐԻՎԱՅՐՈՒՄ

Միլոշեւիչի յանձնումը Ետեկոսյաւիոյ քաղաքական շրջանակներուն մէջ յետ ցնցումներ յառաջացուցած է երէկ, բարեկարգչականներու միջեւ եւ անոնց դաշնակիցներուն հետ տարակարծութիւնները աւելի եւս խորացնելով։

Դաշնակցային կառավարութեան կրտսեր անդամները, որոնք կ'ընդդիմանային Միլոշեւիչի յանձնումին, յայտնած են, որ արտօնած են Ետեկոսյաւիոյ վարչապետ Ջորան Ճինճիչի, որ հրաժարի Արդարեւ, ան երէկ հրաժարեցաւ, կառավարութեան տապալումը պատճառելով։

Նախագահ Վոյսլաւ Քոշթունիցա Նոյնպէս խստիւ քննադատած է սերպական իշխանութիւններուն կողմէ Միլոշեւիչը յանձնելու որոշումը։

Ինքնին Քոշթունիցա-

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Այսու կու գամք յայտարարելու, թէ 2001-2002 յառաջիկայ տարեշրջանի արձանագրութիւնները կը սկսին Երկուշաբթի, 4 Յունիսին եւ կը շարունակուին մինչեւ Ուրբաթ, 13 Յուլիս, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն մինչեւ կէսօրուան ժամը 1:30։

ԾԱՆՕԹ 1.- Ներկայ աշակերտները պարտին իրենց նախնական արձանագրութիւնները կատարել մինչեւ 13 Յուլիս։

ԾԱՆՕԹ 2.- Յառաջիկայ կրթական տարեշրջանին, *պաքաւորեալի* աւարտական դասարանին համար կը շարունակուին հետեւեալ 3 մասնագիտութիւնները.

1. Lettres et Humanités
2. Sciences de la vie
3. Sciences g n rales

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ Կիրակի, 1 Յուլիս 2001ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռս վեհափառ հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ընտրութեան եւ օծման 6րդ տարեդարձին առիթով, յընթաց Ս. պատարագի թմնի եկեղեցիներէն ներս պիտի կատարուի՝

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԱՂԹԱՆԸ

Կը հրապարտէ մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ ըլլալու հոգեպարար արարողութեան եւ աղօթելու վեհափառ հօր քաջառողջութեան եւ արեւշատութեան համար։

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

յի կուսակցութիւնը ըսած է, թէ սերպական բարեկարգչական «ՏՕՍ» պլոքի խորհրդարանական խմբակէն պիտի հրաժարի։ Պլոքը Ետեկոսյաւիոյ կառավարութեան գլխաւոր գործակիցն է եւ Սերպիոյ մէջ միակ պատասխանատուն։

Սակայն կուսակցութիւնը շեշտած է նաեւ թէ ամբողջովին պիտի չհեռանայ 18 կուսակցութիւններէ բաղկացած «ՏՕՍ» պլոքէն, որ անցեալ տարուան Հոկտեմբերին կազմուած էր Միլոշեւիչը Ետեկոսյաւիոյ նախագահի պաշտօնէն հեռացնելու համար։

Քոշթունիցայի գայնլոյթին թիրախը Սերպիոյ վարչապետ Ջորան Ճինճիչի կառավարութեան Հինգշաբթի օրուան որոշումն է՝ անտեսել Ետեկոսյաւիոյ մէկ առեանին վճիռը եւ արդարեւ Միլոշեւիչը յանձնել Լա Հէյի առեանին։

Ճինճիչ երէկ իր քայեբը պաշտպանած է, ըսելով, որ յանձնումը պետութեան օգուտին համար է։ Ան ըսած է, թէ որեւէ այլ լուծում, քոյի առեանին հետ գործակցութենէն, երկիրը գէպի աղէտ պիտի առաջնորդէր։

ՌՈՒՍՈՅ ԲԸՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Ռուսիա երէկ խստիւ դատապարտեց Միլոշեւիչի յանձնումը, գայն ապօրինի նկատելով եւ յայտնելով, որ այդ քայլը կրնայ անջատողականութեան բոցերը հրահրել։

Արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով յայտնած է, որ այդ քայլը պիտի վնասէ Ետեկոսյաւիոյ «պլուրալի» հիմարկութիւններուն՝ տասնամեակ մը խռովութիւններէ ետք։

Իվանով անուղղակի կերպով արեւմտեան երկիրները քննադատած է, որովհետեւ անոնք Ետեկոսյաւիոյ յատկացուելիք օժանդակութիւնները Միլոշեւիչի յանձնումին կապած են։

Երէկ Նուիրատուներու խորհրդաժողովը ընդհանուր 1,28 միլիաո տոլար խոստացած է Ետեկոսյաւիոյ։

(ՌՈՅԹԸՐԶ)

ՖՐԱՆՍՈՒԱ ԼԷՈԹԱՐ ՏԵՍԱԿՅԵՅԱԻ ՄԱԿԵԴՈՆԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ

ՄԲՈՓԻԷ, 29 (ՌՈՅԹԸՐԶ)․– Եւրոպական Միութեան Պալքանեան շրջանի նոր բանագնաց Ֆրանսուա Լէոթար Ուրբաթ օր տեսակցութիւն մը ունեցած է Մակեդոնիոյ նախագահ Պորիս Թրալքովսքիի հետ, Պալքանեան շրջանին մէջ նոր պատերազմ մը կանխարգիլելու նպատակով։

Պրիքսելի մէջ, ՕԹԱՆ յայտնած է, թէ վերջնական կանաչ լոյս տուած է՝ Մակեդոնիա 3000ւոց ուժ մը ղրկելու ծրագիր մը, ալպանախոս ըմբոստներէն պէնքեր հաւաքելու եւ քանդելու համար։

Ուժը Մակեդոնիա պիտի մեկնի միայն, երբ անայուն պինաղուլ մը հռչակուի եւ մակեդոնական քաղաքական կուսակցութիւններուն միջեւ քաղաքական համաձայնութիւն մը գոյանայ։

ՅՈՐԴԱՆԱՆ ԻՊՐԱՅԻՄ ՂՈՇԷ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ԱՄՄԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ

ԱՄՄԱՆ, 29 (ՌՈՅԹԸՐԶ)․– Պաղեստինեան Համաս իսլամական շարժումը Ուրբաթ օր յայտարարեց, որ Յորդանանի հետ ստորագրած է համաձայնագիր մը, որուն լոյսին տակ Ամման արտօնեց աքսորեալ ղեկավարի մը վերադարձը։

Յորդանան Հինգշաբթի օր յայտարարած էր, որ արտօնութիւն պիտի տայ Իպրահիմ Ղոշէի Ամման վերադառնալու։ Ղոշէ խոստացած էր խզել իր կապերը Համասի հետ։ Ղոշէ 15 օր Ամմանի օդակայանը մնայէ ետք, Հինգշաբթի օր Պանքթ մեկնած էր։ Համասի քաղաքական հարցերու բաժանմունքի ղեկավար Խալէա Մեշաալ ըսաւ, որ Ղոշէ յօժարեցաւ օդակայանէն հեռանալ, երբ Համաս եւ Յորդանանի իշխանութիւնները ստորագրեցին համաձայնագիրը։ Մեշաալ աւելցուց, որ Ղոշէ, թէեւ պիտի խզէ Համասի հետ իր բոլոր կապերը, բայցեւայնայն ան պիտի պահէ յորդանանեան հպատակութիւնը։ Մեշաալ աւելցուց, որ Ղոշէ կարողացած է համաձայնագիրին պայմանները եւ անոր լոյսին տակ որոշած է Պանքթ մեկնել։ Մեշաալ ըսաւ նաեւ, որ Ղոշէի հարցը լուծուեցաւ Ապտալա Բ. Թաղաւորի միջամտութեամբ։ Յորդանանի կառավարութիւնը սպառնացած էր Ղոշէն գրկել յորդանանեան հպատակութենէն, եթէ Համասէն չհրաժարի։

Կր Նախատեսուի, որ Ղոշէ մօտ օրէն վերադառնայ Պանքթէն։

ՌՈՒՍԻԱ ԶԻ ՄԵՐԺԵՐ «ԷՅ. ՊԻ. ԷՄ.» ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ԲԱՐԵՓՈԽԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ ԿԸՍԷ ԶՈՐ. ԻՎԱՆՈՎ

ՄՈՍԿՈՒԱ, 29 (ՌՈՅԹԸՐԶ)․– Ռուսիա քաջարձակապէս չի մերժել 1972ի «Էյ. Պի. Էմ.» համաձայնագիրը բարեփոխելու գաղափարը, «սակայն Մ. Նախագահը ու կողմէ պահանջուածը ամբողջ համաձայնագիրին տապալումին պիտի յանգի», ըսած է ռուս պօրավար Լեոնիտ Իվաշով։

Առաջին անգամ ըլլալով էր, որ նման բարձրաստիճան պաշտօնատար մը քաջայայտօրէն խօսած է համաձայնագիրը բարեփոխելու կարելիութեան մասին։ Ուաշինկթոն պայ Պաղ Պատերազմի «մնացորդը» կը նկատէ, սակայն Մոսկուա պայն կենսական կը նկատէ ռազմավարական ապահովութեան համար։

Այս ամսուան սկիզբը նախագահ Վլադիմիր Փուրին ախարկած էր այն կարելիութեան, թէ Մոսկուա կրնայ «Էյ. Պի. Էմ.»ին սահմանափակ փոփոխութիւններ ընդունիլ։

ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԸ

ՕԳՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶՊԱՆՈՒՀԻԻ ԿԱՐԻՔ

Միութիւնս կարիքը ունի համալսարանաւարտ, մանկավարժական վկայական ունեցող օգնական մանկապարտիզպանուհիի մը։

Շտաբըրուողներն կը խնդրուի դիմել Շ. Բ. Ը. Մ.ի Կեդրոնական գրասենեակ, Տեմիրեան Կեդրոն, Յոյ յարկ, Էնոաձայնի քիւր՝ 04 522842 եւ 04 522843։

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵՆԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Դարուիի Յովակիմեան (Երկրորդական) Պողոս Գ. Կարմիրեան (Միջնակարգ) Լեւոն Կ. Նազարեան (Նախակրթարան) 2001–2002 ԿՐԹԱՆԵՐԶԱՆ

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շ. Բ. Ը. Միութեան Լիբանանի սեփական վարժարաններու 2001 2002 տարեշրջանի արձանագրութիւնները, նախկին աշակերտներուն համար, տեղի պիտի ունենան 18 Յունիսէն 20 Յուլիս 2001։ Արձանագրութեան սակ՝ 300.000 Լ. ռ.։

Լեւոն Կ. Նազարեան եւ Դարուիի Յովակիմեան վարժարաններու աշակերտները պիտի արձանագրուի Ձապէլ Մովսէսեան Կեդրոն, Ա. յարկ (Սին Էլ Ֆիլ). Երկուշաբթի, Երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8:30էն կէսօրէ ետք ժամը 3:00։ Հեռաձայն՝ 01 481319 եւ 01 484196։

Իսկ Պողոս Գ. Կարմիրեանի աշակերտներուն արձանագրութիւնները տեղի պիտի ունենան Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը, Կարմիրեան Վարժարանէն ներս (Անթիլիաս), Էնոաձայն՝ 04 413933 եւ 04 522841։

Միայն արձանագրութեան օրերուն կարելի է գեղչի դիմումագիր ստանալ եւ գայն լեցնել ետք մինչեւ 30լիս 31, յանձնել 2. Մովսէսեան Կեդրոն, Ա. յարկ, տիկին Լուսնակ Նորոյեանին։

Շ. Բ. Ը. Մ.ի ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԸ

ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԶ

●7էն 14 Յուլիս QUEEN CONSTANTINA զբօսանալով 8 օր Կիպրոս, Ռոտոս, Աթէն եւ 5 կղզիներ՝ 399 \$։

●16էն 27 Յուլիս Երեւան - Ծաղկաձոր, պտոյտներով՝ 675 \$։

●16էն 30 Յուլիս Երեւան - Ծաղկաձոր - Արցախ՝ 935 \$։

●17էն 27 Օգոստոս Երեւան - Ծաղկաձոր՝ 675 \$։

●21էն 28 Սեպտեմբեր Երեւան - Ծաղկաձոր՝ 585 \$։

●21 Սեպտեմբերէն 1 Դոկտեմբեր Երեւան - Ծաղկաձոր 675 \$։

- Յիշատակի նուերներով։

●Յորդանան 5էն 8 Յուլիս, լման ձաշ եւ պտոյտներ 280 \$։

Շեռ. 01-261177, 01-265068, 01-240654, 03-233978։ Գիշերը՝ 01-258887։

●Վառնա 8 օր՝ 280 \$, Դամասկոս 1 օր՝ 17 \$։


Երևուսաղէմը մէջ հայագիտական ծրագրիրն եւ Եր-
այական համալսարանի հնագիտական հիմնարկին
ողմէ կազմակերպուած դասախօսութեան մը ըն-
ացքին Տ- Արիթ եւ Մ. Սթոն ներկայացուցած են
րենց հնագիտական պեղումներու երկրորդ հանգրը-
անի աշխատանքներուն արդիւններուն: Խօսելով
Յրդ զարու պատկանող գերեզմաններուն մասին,
նոնք րսած են, թէ Արեւելքի մէջ հրեաներու հաս-
տատման տեանակիւնէն զիտած՝ գերեզմանները իրա-
նէս շատ հին են եւ ի յայտ կը բերեն, թէ հրեաները
յդ ժամանակաշրջանին արդէն իսկ եղած են Հայաս-
տանի մէջ:

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

ԱՇԽԱՐՀԻՆ ԲԱՅՈՒՄԸ
ԱՐՑԱԽԵԱՆ ՊԱՏՈՒՀԱՆ ՄԸ
www.artsakhworld.com ԿԱՅՔԸ

ԲԱՆԱՏԱՀԱՅԵՐ ԲԱՆԱՏԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆԻՆ ՄԻՋ



3800 աշխատակիցներու 20 տարիներու կոթողական ուսումնասիրութեան արդիւնքն է քանատական համայնագիտարանը, որ անցեալ տարի համացանցի www.thecanadianencyclopedia.com կայքին մէջ գե-տեղուեցաւ:

Համայնագիտարանին մէջ տեղ գտած են յատկապէս Քանատայի անշուշտ նիւթեր, որոնց կարգին տեղեկութիւններ՝ քանատահայտութեան մասին:


Այսպէս, հայերը ներկայացնող յօդուածը հպանցիկ ակնարկով մը անդրադառնալէ ետք հայկական Միլիոններ, կը մանրամասնէ հայերու Քանատա գաղթը, որ ըստ համայնագիտարանին, տեղի ունեցած է երեք հանգրուաններով:

Ա. հանգրուանը կ'երկարի 1880ականներէ մինչեւ 1900ականներու սկիզբը, երբ Նոյրը 2000 հայ ուսա-նողներ, վաճառականներ եւ հողագործներ Քանատա կը գաղթեն: Գաղթականներու երկրորդ հոսքը տեղի կ'ունենայ յետ-եղեռնեան տարիներուն, իսկ երրորդը՝ 1950էն 1990ականներ երկարող ժամանակաշրջա-նին, յատկապէս՝ Միլիոն Արեւելքի քաղաքական վե-րլիպորումներուն պատճառով:

Յօդուածը կը ներկայացնէ նաեւ քանատահայե-րուն կրօնական, քաղաքական, ուսումնական, մշա-կութային եւ մարզական - երիտասարդական կեանք-քան: Յօդուածը նաեւ կը նշէ, թէ՛ «1915էն 1922 աւելի քան 1,5 միլիոն հայեր ընդնշուեցան» իրրեւ հետե-ւանք թուրք կառավարութեան գործադրած ցեղաս-պանական քաղաքականութեան:

Նիւթը ամբողջութեամբ կարդալ փափաքողները կրնան այցելել՝ www.thecanadianencyclopedia.com կայքը եւ «search»-ի տուփիկին մէջ գրել «armenians»:

ՀԱՄԱՅՆԱՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՄԱԿԱՐԳԻԶԻ «ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ»



Ըստ մասնագէտներու, համակարգիչներ օգ-տագործողներու մեծ մասը չի կրնար աուաւելագոյնս օգտուել իրեն համակար-գիչներէն, որովհետեւ այս վերջինները յաճախ կը տա-ռապին տարբեր տեսակի «անհանգստութիւններէ»: Միւս կողմէ, յաճախ ձեռնուռն չէ զոյգն գծուարու-թիւններու հարթումին համար մասնագէտներու դի-մել եւ կամ գնել համակարգչային յատուկ ծրագրի-ներու «Սի.Սի.Իմ»ներ, որոնք կը բարեբաւեւ համա-կարգիչներու աշխատունակութիւնը:

Նման պարագաներու, կարելի է դուրս թակել հա-մացանցի կարգ մը կայքերու, որոնք ձեռքով համա-կարգիչներու ծրագրային մեծ թիւով գծուարութիւն-ներ հարթելու կարելիութիւնը կ'ընձեռեն:

Այս կայքերուն մէջ յատուկ տեղ կը գրաւէ «PC Pitstop» (www.pcpitstop.com), որ պէտք է ըլլայ ձեռ-առաջին կանգառը, եթէ համակարգչային որեւէ գծուարութիւններ կը զիմագրաւէք:

Ձեր համակարգիչին «աւտոյնութեան» վրայ վստահ ըլլալու համար հարկ է այցելութիւն մը տալ նաեւ Symantec ընկերութեան կայքին (www.symantec.com): Այստեղ տեղադրուած յատուկ ծրագրիներու միջո-ցով կրնաք գիտնալ, եթէ ձեր համակարգիչը վարակ-ւած է ժահրերով կամ «trojan horse»երով:

«Belarc» օգտաշատ այլ կայք մըն է: Այս կայքը (www.belarc.com) այցելելով, կրնաք արձանագրել 500kb տեղ գրաւող ծրագրը մը, որ ամբողջական տե-ղեկագիր մը կը ներկայացնէ ձեր համակարգիչին վի-ճակին մասին:

Անգու մարտն-չումի եւ ան-սակարկ պայ-քարի հետ նոյնացած Ար-ցախը հայկական խորա-մատ պատկանելութեան ապրող վկայութիւնը եղող պատմամշակութա-յին աշխարհն է նաեւ:

Սակայն նոյն այս Ար-ցախը արեւմտեան մա-մուլին կողմէ յաճախ կը ներկայացուի իրրեւ ոչ աւելին, քան ցեղային հակամարտութեան տուն տունը տարածք:

Ահա, արցախեան իրա-կանութեան խոտոր հա-մեմատող այս պատկե-րացումին արժանահա-ւատ տեղեկատուու-թեամբ հակադարձելու թելադրութեան ենթահո-տառով կը կր հաս-տատուի, որ համացանցի «Արցախ Աշխարհ» կայ-քը:

Հայերէն, ռուսերէն եւ անգլերէն բովանդա-կութեամբ Արցախի պատմութիւնը, մշակոյ-թը եւ ժողովուրդը ներ-կայացնող այս կայքը (www.artsakhworld.com) կը բաժնուի գլխաւոր երեք մասերու:

Ա.- Զարտաբանութիւն

Բ.- Լուսակարգներու

Գ.- Պատմական եւ

արխիւային նիւթեր

«Զարտաբանութիւն»

թիւն եւ պատմութիւն» բաժինը Արցախի պատ-մութիւնը, աշխարհա-գրութիւնը եւ մշակոյթը եւ ներկայացնող հարուստ գանձարան մըն է, ուր

Արցախի եւ անոր չլրա-կայքին մասին կը փո-խանցուին սպառնչ տեղե-կութիւններ: Այստեղ յա-տուկ ենթաբաժիններ յատկացուած են Քերիա-ջարի, Լաչինի, Ղուրաթ-լուի, Ջանդեղանի, Թաւ-րաթի, Պարտաւի, Աղդա-մի, Աղջապատի, Պալլա-կանի, Յիգուլիի, Ջեր-րայիի, Մարտակերտի, Հաղարութի, Ասկերանի եւ


Շուշիի չրջաններու:

Այս բաժինով ներկա-յացուած գիտաշխատու-թիւնները կը պատկանին խումբ մը հայ թէ օտար փրոֆեսորներու, որոնց կարգին են՝ Ռ. Յոյհան-նէսեան, Ս. Տէր Ներսէս-եան, Լ. Ջէքիեան, Ս. Հարաթեան եւ ուրիշ-ներ:

«Լուսակարգներու» բաժինին մէջ տեղադրուած են Ար-ցախի վանքերուն, եկե-ղեցիներուն, մենաստա-ններուն, ինչպէս նաեւ կամուրջներուն եւ բնու-թեան յուսանկարներ, որոնք կը պատկանին Սամուել Կարապետեանի յուսանկարչական ուսուր-նակին:

«Պատմական եւ արխիւային նիւթեր» բա-ժինին մէջ ընդգրկուած են շարք մը յօդուածներ, գիտաշխատութիւններ եւ փաստաթղթեր:

Այստեղ կը կարդանք Վահան Հաճի-Պետրոսի գրիչին պատկանող եր-կու յօդուածներ: Առաջի-նը կը վերլուծէ Լեւոնային Հարաբարի եւ Քոստովի հակամարտութիւնները, իսկ երկրորդը կը ներկա-ւանայ



«Արցախ Աշխարհ» կայքին մայր էջը:

«Արցախ Աշխարհ» կայքը տեւարար կը թար-մացուի նոր լուրերով, ուսումնասիրութիւննե-րով եւ յօդուածներով, որոնք կարելի է կարդալ



Դադիվանքը համացանցին վրայ:

Ռուսիայ վարչակազմին միջեւ փոխանակուած նամակները,

Ռուսերէնով յօդ-ւած մը, որ կը ներկա-յացնէ Հայրութի եւ անոր չրջակայքի անցեա-լը:

Հայերէնով 2 յօդ-ւածներ՝ «1500ամեակ Վաղաքան Բաբելայի ինչկական առաջին սահ-մանադրութեան» եւ «Արցախի ամփոփ պատ-մութիւնը»:

Ռուսերէն յեղուով արխիւային երկու կարե-ւոր նիւթեր, աւաջներ՝ Լէւոն տեղեկագիր (1925) Հայաստանի ճանապարհ-ներուն եւ պաշտպանու-թեան կարելիութիւննե-րուն մասին, իսկ երկ-րորդը՝ Վազգէն Ա. կա-թողիկոսի նամակները՝ ուղղուած իտալացիին իր առ-կէքներուն պահպանման ի ինչկին:

կայքի մայր էջին ալ կող-մը գտնուող նորութիւն-ներուն յատկացուած բաժինին մէջ:

Այսօրուան տեղեկա-տուական բնագաւառին մէջ, եթերային եւ աղա-գրական մամուլին առը-թիւ, ու յաճախ նաեւ անոնցմէ աւելի իրենց կարեւորութիւնը գգալի կը դարձնեն համացանցի կայքերու միջոցով տեղե-կութիւններու փոխան-ցումն ու քարոզու-թիւնը: Այս ուղղու-թեամբ երախտաշատ աշ-խատանք մըն է «Արցախ Աշխարհ» կայքի անձնա-կազմին կատարածը:

Անոնց յանձնարարութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ յա-ւելեալ փաստ, որ ար-ցախցիին պատրաստ է բո-լոր միջոցներով պաշա-րեւել իր հոգին եւ իր առ-կէքներուն պահպանման ի ինչկին:


ՀԱՄԱՅՆԱՑԻ ՄԻՋՈՑՈՎ ԶՐՈՅՑԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Վերջին տարի-ներուն համա-կարգիչ օգտա-գործող բազմա-միլիոն մարդիկ կը գիմեն զրոյցի (chat) ծրագրիներ-րու, իրրեւ ամէ-նէն զործնական եւ զիւրին ձեւը՝ համացանցի միջո-ցով հաղորդակցե-րու:

Համացանցի միջոցով զրոյցի կարելիութիւնը ընձեռող ծրա-գրիներու օգտա-գործումով մարդիկ կրնան ուղղակի հաղորդակցիլ աշխարհի շուրջ ծագելուն համացանց օգտագործող որեւէ անձի հետ: Ուղղակի հաղորդակցութեան իր գրութեամբ զրոյցի ծրագրերը շատ նման է հեռաձայ-նային կապին, այն տարբերութեամբ, որ ծրագրերը օգտագործողը բոլորովին գերմ կը մնայ միջազգային հեռաձայնի ծախսերէն:

Զրոյցի կարեւորագոյն ծրագրիները ենթակային առիթ կ'ընձայեն հաղորդակցելու գրութիւններու եւ ձայնային կապի միջոցով:


Ստորեւ կը ներկայացնենք այս ծրագրիներուն կա-րեւորագոյնները:



ICQ

Զրոյցի ICQ ծրագրերը (յապաւում՝ «ես քեզ կը փնտռեմ» անգլերէն բառերուն) համացանցի միջոցով ուղղակի կապ հաստատելու ամենէն հին ծրագրիներ-ն են մէկը կը հանդիսանայ եւ այսօր աշխարհի տա-րածքին ունի աւելի քան 100 միլիոն օգտագործող:

ICQ-ի ժողովրդականութիւնը մասամբ կը կայանայ անոր ընձեռած կարելիութիւններուն բազմազանու-թեան մէջ: Արդարեւ, գրուելու կողքին, այս ծրա-գրը օգտագործողները կրնան «Ֆայլ»-եր փոխանա-կել, համակարգչային խաղեր խաղալ, ինչպէս նաեւ՝ հեռաձայնային կապ հաստատել աշխարհի տարածքին



գտնուող հեռաձայնի կամ համացանցի կապուած որեւէ համակարգիչի հետ:

Սակայն ICQ-ը զիջարար առաւելութիւնը կը հան-գիսանայ բարեկամներ եւ ծանօթներ փնտռելու, ինչ-պէս նաեւ նոր բարեկամներու ծանօթանալու «search engines»-ին, որուն միջոցով, օրինակի համար կարելի է զիւրութեամբ գտնել ձեր նախասիրութիւնները ու-նեցող, տուեալ քաղաքէ մը, տուեալ անունով անձ մը եւ գրուելու անոր հետ:

AOL INSTANT MESSENGER (AIM)

AOL համակարգչային զրոյցի ծրագրերը օգտագոր-ծողներուն թիւը կը հասնի... 85 միլիոնի: Ծրագրերը կը յատկանշուի օգտագործումի զիւրութեամբ: Ձայ-նային զրոյցի զիւրութիւնը այստեղ եւս տրուած է: Աւելին՝ AOL Instant messenger-ի միջոցով ենթական կրնաք միաժամանակ քանի մը հոգիի հետ գրուել:

MSN MESSENGER

«Մայքրոսոֆթ» ընկերութեան զրոյցի այս ծրագրի-րը կը մրցի այս բնագաւառի «վեթերաններ»՝ ICQ-ի եւ AIM-ի հետ:

YAHOO! MESSENGER

Yahoo! messenger նոյնպէս մեծ ժողովրդականու-թիւն կը վայելէ: Այս ծրագրերը կը յատկանշուի պատ-կերներու օգտագործումի զիւրութիւններով, ինչպէս նաեւ՝ ուղղակի թիւն լուրեր փոխանակելու առաւե-լութեամբ: Միւս կողմէ, ծրագրիին ընձեռած կարե-լիութիւնները նախորդներէն նուազ են:

ICQ-ն կարելի է արձանագրել այցելելով www.icq.com, AOL-ը՝ www.aol.com, MSN messenger-ը՝ www.messenger.msn.com, իսկ Yahoo! messenger-ը՝ www.yahoo.com

Պատրաստե՛ք ինչպէս ՍՈՒՐԱՏԵԱՆ

ԱՅԻԼ

ԻՆՔՆԱՃԱՐԺԻ ԱՊԱՏՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

●SOS FREE OF CHARGE
ԻՆՔՆԱՃԱՐԺԻ ՓՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ
ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՁՐԻ

ՀԱՍՅԷ. ԱՖԷՏԻ ԾԵՆՔ Բ. ՅԱՐԿ
ՀԵՌ. 01-242556 եւ 01-242557

www.hamazkayin.com



Մանկապատանեկան

ԳԵՂԵՑԻԿ ՄԱՁԵՐ

Անոնք շատ շիտակ են կամ գանգուր, շատ բարակ կամ շատ հաստ, շատ նուրբ կամ շատ չոր, եթե գանոնք լաւ խնամես, կրնան առողջ, գեղեցիկ եւ փայլուն ըլլալ:

ՄԱՁԻ ՄԵ ԾՆՈՒՆԴԵ

Իւրաքանչիւր մազ կը ծնի մորթին մազերու խաւէն: Անոր տեսանելի բաժինը յիշատակէ: Մորթին մէջ պահուած է սոխածեւ արմատը, ուր կը շինուի նոր մազը: Արմատը շրջապատուած է մկանով մը, որ մազին կարելիութիւնը կու տայ կեղծով մը գլխուն վրայ մնալու: Այս գեղձը կ'արտադրէ իւզոտ նիւթ մը սեպումը, որ մազը կը ծածկէ եւ գոյն կը պաշտպանէ արտաքին յարձակումներէ:



ըլլան, անոնք աւելի գանգաղ կ'աճին:

- Պատանեկութեան շրջանին մազերուն գեղձերը շատ սեպում կ'արտադրեն, հետեւարար մազերը կ'իւղոտեն:

- Պէտք է յատուկ շամփուէն մը գործածել:

- Թեփերը մեռած մորթի պզտիկ կտորներ են:



որոնք մորթի մազի խաւէն կը կրթնուին: Անոնց ներկայութեան պատճառով շատ յաճախ մանր ստուկ մըն է:

- Մազերը շարժուած մէջ մէկ կամ երկու անգամ լուս, ալլապէս գանոնք պաշտպանող սեպումի խաւը դժուարութեամբ կը վերակազմուի, եւ մազերը իրենց փայլքը կը կորսնցնեն:

- Մազերը խոզանակով մը սանտրէ օրական երկու անգամ, որպէսզի անոնք օդ առնեն: Այս ձեւով դուն պիտի ձերբազատուի անոնց փայլքէն, որոնք մազերու վրայ կը կորսնցնեն: Մազերը պոնտահետեւ աւելի փայլուն պիտի դառնան:

ԽՆԱՄԵՆՔ ՄԵՐ ՄԱՁԵՐԸ

Մազերը յաճախ կտրէ, որպէսզի անոնք գօրանան: Եթէ անոնց ծայրերը երկճիւղ

ՓՈՐՁԱԾ ԵՍ

Ընդծովեայ Հրաբուխը



1) Խորունկ մեծ ամանի մը երեք քառորդը լեցուր ջուրով:

4) Զուրբ եւ մեկանը իրարու լաւ խառնէ:



5) Եիւր ամանիկ յատուկ դիր եւ կափարիչը բաց:

ԻՆՉՊԵՍ

Շիշիկ մէջի տաք ջուրը աւելի թեթեւ է քան ամանին մէջի պաղ ջուրը: Արդիւնք, ան մէկ անգամէն մինչեւ մակերես կը բարձրանայ:

2) Չափահասի մը օդանոթեամբ կափարիչով օժտուած պզտիկ շիշի մը մէջ լեցուր տաք, բայց ոչ եռացած ջուր:



3) Շիշին ջուրին մէջ աւելցուր 1 կաթիլ մեկան կամ ուտելիքի յատուկ ներկ: Շիշը կափարիչով փակէ:

ԱՐԵՂԱՅԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ուրախութեամբ կը յայտնենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ յառաջիկայ Կիրակի, 1 Յուլիս 2001ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ իր անդրանիկ պատարագը պիտի մատուցանէ եւ քարոզէ:

ՀՈԳՇ. Տ. ՄԱԿԱՐ ԱՐՂ. ԱՇԳԱՐԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան Պատարագ Զարոզ

Ժամը 7:30ին Ժամը 9:30ին Ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուի մեր հաւատացեալ ժողովուրդը՝ մերկայ գտնուելու այս արարողութեան եւ լսելու հայր սուրբին անդրանիկ պատգամը:

Ի ԴՆԱՅՆ ՆՈՐ ԱՏԱՆԱՅԻ Ս. ԱՏՈՒՄԵԱՆԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշխարհին Շուրջ



Ո՞ՐՆ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՄԵՃ ԾԱՌԸ

Սեքսա տեսակի ծառ մը:

Անհաւատալի՜. աշխարհի ամէնէն մեծ ծառին հասակը կը հասնի... 112 մետրի, այսինքն՝ չափահաս մարդու մը հասակին 62 անգամ քարձրութեան: Այս հսկան աճած է Քալիֆորնիոյ Մոնթկոմրի պետականօրէն պահպանուած անտառին մէջ. ան 1000 տարեկան է:

ԻՆՉ Է ՄԹՆՈՒՆՈՐՏԸ

Ան կազի խաւ մըն է:

Ան քիչ թէ շատ հաստ խաւ մըն է, որ կը ծածկէ մոլորակները եւ գանոնք կը պաշտպանէ արտերկրային քարերէն, որոնք կրնան անոնց վրայ իջնալ:

Գիտէ՞՞ր, թէ միայն երկրագունդը ունի թթուածինով լեցուն մթնոլորտը, զոր մեր թոքերը կրնան շնչել:



նուշով ու կաղինով տուրմը:

ՏՈՒՐՄԸ ԿԸ ԳԻՐՅՆԵ՞

Այո՛, անշուշտ: Տուրմը կը գիրցնէ, որովհետեւ ան կը պարունակէ շաքար եւ իւղոտ նիւթեր: Բայց եթէ ընտրութիւն կատարենք, նախընտրելի է գտնել քաքառով հարուստ (80 առ հարիւր) սուրճ, որ նուազ գիրցնող է, քան՝ կաթով կամ

Ո՞Վ ՀՆԱՐԱՇ Է ԳԻՐԸ

Շուրթերի բնակիչները: Ք. Ա. 2000 թուականին անոնք սկսան եղջյւծայրով նշաններ գծել կաւէ անօթներու վրայ: Գիրը ծնաւ: Անոր շնորհիւ մարդիկ կրցան հաշուել իրենց ունեցածները եւ արձանագրել իրենց յաճածները:



Ո՞ՐՆ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՄԵՃ ՀՐԱՐՈՒՄԸ

Մոնա Լոան: Ան կը գտնուի Հաուայեան կղզիին վրայ եւ ունի ծովուն մակերեսէն 4500 մետր բարձրութիւն:

Այս հրաբուխը կազմուած է 11 քմ. երկարութեամբ հոսած լաւայէ, որ կուտակուած է դարերու ընթացքին: Այս հրաբուխը տակաւին գործօն է:

ԻՆՉ ԶԵՒ ՈՒՆԻ ՍԻՐՏԸ

Ան մեծ հաւկիթի մը կը նմանի: Մեզի ծանօթ սրտի ձեւը սիրահարներուն համար է, իսկ մեծ հաւկիթը՝ սրտին համար: Երբ սրտին աւելի մօտէն նայիս, պիտի տեսնես, թէ այս մկանը զոց բուռնցքէ՞ր հագիւ քիչ մը աւելի մեծ է:



ԻՆՉՈՒՒ ԿԱՏՈՒՆԵՐԸ ԶՈՒՐԷՆ ԿԸ ՎԱԽԱՆ

Անոնք ջուրէն չեն վախնար:

Եթէ նոյնիսկ կատուները լողալ գիտեն, անոնք շատ չեն սիրեր լողալ: Անոնք չեն վախնար ջուրէն, սակայն անոնց մորթը ջուրը դիւրութեամբ չի ծծեր. հետեւաբար, երբ անոնց ստեւները կը թրջուին, չորնալու համար ժամերու պէտք ունին: Եզրակայութիւն. կատուները կը նախընտրեն խուսափիլ լողանքէն:


ԻՆՉՈ՞Ւ ԿԱՆԿԱՌԸ ՄԱՁԵՐ ՈՒՆԻ

Պաշտպանուելու համար:



Ինչպէս վարդին փուշերը, նոյնպէս ալ կանկառին մազերը գայն կը պաշտպանեն արտաքին աշխարհի յարձակումներէն: Անոնք արգելք կ'ըլլան միջատներուն, որոնք կը փորձեն յարձակիլ այս բանջարեղէնին սրտին վրայ:



ԺԱՄԱՆՅ



Կրնա՞ս գտնել արջուկը մեղրին հասցնող ձամբան:



Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 6 տարբերութիւնները:



1 - 47 կէտերը իրարու միացուր՝ գտնելու համար պահուած պատկերը:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

**al-mashrek**
INSURANCE & REINSURANCE S.A.L.
Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.
(01)258228 – (01)268808
Fax: (01) 258223

ՀԵՌԱՏԵՍԻԼ




♦-Օ ՊՐԱՏՐԻ- (Փլաներ/ Ապրած, Սթարկեր),- ճորճ Քլունի 2
դնկերներով բանտէ կը փախչի. արգելք հանդիսանալու իր
կողակիցին (Հելեն Հանք), որ ստադրած է ուրիշի մը հետ պսակուի:

00.- Ալան Ալ
Սապահ

11:00.-

ԿՈՐԻՍԻԹՐԷԱՆԵՐՈՒ:

առաւելութիւնը՝ ի նպաստ սեւերուն է (34... 𐎧𐎫𐎼𐎿 35. 𐎧𐎫𐎼𐎿
առաւելութիւնը՝ ի նպաստ ճերմակներուն կ'ըլլալ)] 0-1



1

ԵԵՐԻ ՃԷՅՄՍ -
ՓԻՎՈԿԱՐՈՎ Ժ.
2001

2

ՃԵՆՁՍ Բ.-
ՖԵՐԿՆԸՆԸ Ժ
ԲՆԼՍՍ
2001

3

ԼԻՈՒՆԻՍ Ո.
1991

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»ի մէջ լինել ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը մտքադրատուն՝ ծանուցումներու բաժնակումը ասցնեն հրատարակման թուականին առնուակէ օրը առաջ, Մինչեւ երեկոյն 5:00: ՄԱՀԱԶՂԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահազը՝ լընդուտի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՊԱՐԳԵՒ ԺՈՐԺ ԱՐՄԼԱՆԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 1 Յուլիս 2001, Ամթիլիսի Ա. Գրիգոր Լուսաորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՀՈՒՓՍԻՄԷ ՏԻՆԵԱՅԵԱՆԻ մահուան քա-
ռասուցքին առիթով, հոգեհանգստեան պաշ-
տօն պիտի կատարուի Կիրակի, 1 Յուլիս 2001,
Սրբոց Քառասնցի Մահկանց եկեղեցւոյ մէջ,
լաւարտ Ս. պատարագի:

ԿԱՐԱՊԵՏ ԶԻԼԵՏՃԵԱՆԻ (մահացած՝ Ամե-
րիկա) մահուան քառասունքին առիթով, հոգե-
համաճարտես պաշտօնս պիտի կատարուի Կիրա-
կի, 1 Յուլիս 2001, Սրբոց Զորասնցի Մահկանց
եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԱՐԴԻՎԱՐԻ ԽԱԶՆԵՐԱՆԻ մահուան Ա. տա-
րելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն
պիտի կատարուի Վիրապի, 1 Յուլիս 2001,
Սրբոց Զատասնցից Միացկանց եկեղեցւոյ մէջ,
լաւարտ Ս. պատարագի:

Կ'ՈՒԶՈՒԻՆ

● Ոսկրի գծագրիչ:
 Դսկերիչ եւ աղաման-
 դաշարներ: Հեռ. 03-
 954741:

● 13 ՅՈՒԼԻՍ 2001
ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵՎՈՅ

●14 ԵՒ 15 ՅՈՒԼԻՍ 2001
ՔԵՐՄԵՄ

ԾԵՄԱՐԱՆՆԵՐՈՒ
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐՀ

«ԱԶԴԱԿ»Ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ
ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ
կապուելու համար
հեռաձայնել
հետևեալ թիւերուն.
258526, 260115 եւ
241274:

VARNA
255\$
T. 01 261177 - 265068
240654 - 03 233978

ՆԻՈՅ (21 Սարգեն 20 Ապրիլ)
Այս վերջին օրերուն որոշ յոզմունքիսն մ'ը պատած է ձեզ
Պետէ. է. որ հանգստանաք քիչ մ'ը. հետուն ի՞նչ առողջապա-
հական ճիշդ կանոններու, միացի՛ք գոտարկ շարեկամնե-
րու, աշակերտի՛ր պիտի քօթաբար անորամ'աղբոր իննը:
ՆՅՈՒՆ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Նրէ աշտօր ստիպողիք ինքնաշարժ վարելու, սո-
վորականեմ աւելի ուշադիր եղի: Ձեր մօտ հրախ-
իցեք ձեր վաղեմի բարեկամները եւ անոնց հետ
անցուցէք գոարք պահեր:

ՃԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Դուք ձեր վրայ ծալուած մ'ի մնաք, ձեր մօտ հրա-
ւիրեցէք ձեր նախկին օրերու, բարեկամները, միաս-
նաբար լիշեցեք անցեալի քաղցր օրերը եւ ուրախ
եղէք անցուցէք միասնաբար:

ԴԵՆՑԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)
Օրը եղ քեխալորէ խոհեմութիւն. գգուշաւորու
թիւն ինքնաշարժ վաքելու պահունք րէ ձեր ձեր
շերտիւննեղուն մէջ: Մի՛ գրգռէ ջիւղեղը ձեր կո
լակիցին. որպէսզի անհանդէ վեճի մը առիթ չտաք
նըղհակառակը. փունջ մը ծաղիկ կամ փոքր նուէլ
մը անոր սիրաբ պիտի ուրախացնէ:

ՄԱՌԻԻԾ (24 ՅՈՒՆԻՅՆ 23 Օգոստոս)

Այսօր ձեր ուզածին պես պիտի չրվալ. գործերը չընան ըլլալ անբաւարար, բայց դուք մնացեք հանգիստ, պատեցեք իսկ տեսքը, քե ինչ փոփոխութիւններ կան քաղաքին մէջ:

ԿԵՆՏՐԱԼ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)

Իրավաստան մեջ ձևի ու ունեցած դրամին մօտեցելը գրուշաուր կերպով, որպեսզի լանկարծ դրամին նեղութիւն չուենաք: Այսօր ձեզի կը քելապտուի ու շաղիք բլլալ ամէն մարդի մեջ. պտուղի եւ ալ շար չուէմենքու առնեն:

ԿԵՆՏՐՈՆ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)
Լարուած մքնուորտ պիտի տիրէ ձեր գգացական
կեանքին մէջ: Լաւ կ'ընկիր, եթէ հաշտութեամբ մօ-
տենացիր ձեր ատիւնիին: Բարի կամեցողութեա-
ն առաջին քայլը դուրս տուր:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Նրէ կը զգար, քէ մարդկի ձեզի հետ չեն վարուիր այն
պէս, ինչպէս որ պէտք է, բացառութիւն մ'ը պահանջէ,
ցէք, բայց առանց բարկանալու, քայրաքաղաք կենդով:

ՆԱԶԵՆԱԿՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Դուք ձեզ պարտադրելու արժանադրութիւն մը ու
նիք, ինչ որ հանելիլ չի բույր ձեր շրջանակին: Եղի
փափկանկատ ու յարգալիք հանդէպ բոլորին, որ

ԱՅԾԵԴՋԻԻ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)
Ուշադիր ելոք, որ այսօր դատողության, տրամաբանելու սխալ մը չգործէք: Օրը կը պահանջէ խառնաճաշ:

ԾՈՎԱԼՈՅՑ (21 Յունուարին 19 Փետրուար)

Ընտանեկան մրցուիդուրը քիչ մը լարուած է. չա
նացքը հաշտութեան եզր մը գտնել: Ինքնաշարժ վա

ՉՈԻԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Օրը նպաստաւոր է երկար առեմէ ի վեր ձիւ հոգ

ած բարեկամներուն հանդիպելու: Զուարհացեք
Յարգեցեք բոլորը:

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն -ԱՇԽԱՐՀ



ՄԱՐԼ ՊՈՐՈ ՌԵԼԻՆ ՍԿՍԱԻ

Երէկ սկսաւ Լիբանանի 25րդ Մարլպորո Ռելին, որ պիտի երկարի երեք օրուան վրայ, մասնակցութեամբ 37 ինքնաշարժներու: Նշենք, թէ ռելին կ'ընդգրկէ 22 անգրուան:

Երէկ երեկոյեան ռելինի ազդանշանը Պէյրուսթի մէջ տուաւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, պաշտօնական այլ անձնաւորութիւններու ներկայութեան:

Շատերու կարծիքով տիտղոսին գլխաւոր թեկնածուն դարձեալ կը նկատուի Մուհամմադ Պրն Սըլայէմ (Ա. Մ. էմիրութիւններ), որ 11 անգամ Միջին Արեւելքի ախոյեան հանդիսացած է:

Ստորեւ՝ ռելինի 37 մասնակցողները.

1. Մուհամմադ Պրն Սըլայէմ (Ա. Մ. էմիրութիւններ) եւ Ռոնըն Մորկըն (Այիր) Ֆորտ Ֆորտ

2. Փիթթըրո Մորկըն (Այիր) եւ Քարլո Քասինա (Իտալիա) Սուպարու Իմփրեգա

3. Ապտալա Պախաշապ (Անուտ. Արաբիա) եւ Պոպի Ռելիա (Բրիտանիա) Թոյթա Քորոյա

4. Ռոմէ Ֆրոյալի եւ Ջիսա Շեհապ (Լիբանան) Սուպարու Իմփրեգա

5. Ժան - Փիեռ Նասրալա եւ Եուսէֆ Պասիլ (Լիբանան) Սուպարու Իմփրեգա

6. Իվ Լուպէ (Յրանա) Սիթսուպիշի Լանսըր

7. Քրիս Թոմաս եւ Անտրէաս Քրիսթո Տոյիտիս (Կիպրոս) Սիթսուպիշի Լանսըր

8. Միշէլ Սալէս եւ Ահմէտ Ղազիրի (Լիբանան) Թոյթա Սեյիքա

9. Ապտալա Պախաշապ (Անուտ. Արաբիա) եւ Պոպի Ռելիա (Բրիտանիա) Թոյթա Քորոյա

10. Տուսթիթ Պու Տուսթիթ եւ Նապիլ Նըմէյմ Սիթսուպիշի Լանսըր

11. Ապտալա Քասիմի (Ա. Մ. էմիրութիւններ) եւ Ֆրէտ Կոսթիթ (Լիթանիա) Սիթսուպիշի Լանսըր

12. Ջանի Մասաա եւ Ջիսա Շալհուպ (Լիբանան) Կոյֆ Ճի. Թի. Այ.

13. Ռոնըն Ռահի եւ Փաթրիք Ջիսա (Լիբանան) Լանսիա Տեյթա Ինթեկրալ

14. Սուպարաք Ջափիրի (Քաթար) եւ Էլըն Ջարիմըն (Այիր) Սիթսուպիշի Լանսըր

15. Թոնի Ապտէլ Ջաք եւ Նեպիլ Քամպապ (Լիբանան) Սիթսուպիշի Լանսըր

16. Տուսթիթ Պու Տուսթիթ (Քաթար) եւ Միքայէլ Մորիսայ (Այիր) Սիթսուպիշի Լանսըր

17. Ջիսա Ֆրոյալի եւ Ժորժ Նասր (Լիբանան) Նիսան Ճի. Թի. Այ. Ար.

18. Էլըն եւ Ճո Շըքուր (Լիբանան) Սուպարու Իմփրեգա

19. Մուհամմադ Սարաֆ եւ Ռալիտ Սարաֆ (Քուէյթ) Սիթսուպիշի Լանսըր

20. Ռոն Քրեմըն (Աւստրալիա) եւ Ռալֆ Պոշէլ (Լիթանիա) Սիթսուպիշի Լանսըր

21. Սաստուն Քուարի (Քաթար) Սիթսուպիշի Լանսըր

22. Էտիթ Ռէյս (Գերմանիա) Նիսան Ճի. Թի. Այ. Ար.

23. Ահմէտ Սըպպան (Անուտ. Արաբիա) եւ Ճո Տոնի (Այիր) Սիթսուպիշի Լանսըր

24. Նեպիլ Ապտէլ Ջաք եւ Ճո Նասր (Լիբանան) Փէժէ 309

25. Մեթիո Ռոպուստին եւ Ռամզի Ժապպարա (Լիբանան) Ռընո Քիլո Ռելիամս

26. Ահմէ Արէֆ եւ Ռամզի Մանսուր (Յորդանան) Սիթսուպիշի Լանսըր

27. Ջիսա Քարնուհ եւ Նափէտ Ռուհանա (Լիբանան) Փէժէ 206

28. Նիքոս Միլիթիատոս եւ Քոյիս Շարալամպոս (Կիպրոս) Փէժէ 306

29. Օմրան Սըլհա եւ Եուսէֆ Ասմար (Յորդանան) Փէժէ 205 Ճի. Թի. Այ.

30. Ֆարուք Ղարապ (Անուտ. Արաբիա) Սէպի Իպիլա

31. Մուսա Շըպիլ (Լիբանան) Ռընո Քիլո Ռելիամս

32. Նէյն Սըթալի եւ Նատիա Շնոտա (Յորդանան) Ֆորտ Սիթերա Քուսուրթ

33. Էլի Նաամէ եւ Լուէյ Սաքր (Լիբանան) Ռընո Քիլո Ռելիամս

34. Ժորժ Թաամէ եւ Էլըն Ժար (Լիբանան) Ռընո Քիլո

35. Պաֆլի Ղարթըլ եւ Ջպէնէք Քիեմ (Չեխիա) Արոսա

36. Եարոսլաւ Սերնէք (Չեխիա) Արոսա

37. Արէթիշ

38. Արէթիշ

39. Արէթիշ

40. Արէթիշ

41. Արէթիշ

42. Արէթիշ

43. Արէթիշ

44. Արէթիշ

45. Արէթիշ

46. Արէթիշ

47. Արէթիշ

48. Արէթիշ

49. Արէթիշ

50. Արէթիշ

51. Արէթիշ

52. Արէթիշ

53. Արէթիշ

54. Արէթիշ

55. Արէթիշ

56. Արէթիշ

57. Արէթիշ

58. Արէթիշ

59. Արէթիշ

60. Արէթիշ

61. Արէթիշ

62. Արէթիշ

63. Արէթիշ

64. Արէթիշ

65. Արէթիշ

66. Արէթիշ

67. Արէթիշ

68. Արէթիշ

69. Արէթիշ

70. Արէթիշ

71. Արէթիշ

72. Արէթիշ

73. Արէթիշ

74. Արէթիշ

75. Արէթիշ

76. Արէթիշ

77. Արէթիշ

78. Արէթիշ

79. Արէթիշ

80. Արէթիշ

ԹԵՆԻՍ. ՌԻԻՄՊԸԼՏԸՆ

ՍԱՐԳՍԵԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ՍԱՄՓՐԱՍԵՆ

Ռիմպըլտընի թենիսի մրցաշարքի Գ. հանգրուանի տղոց մրցումներուն, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան 6-4, 6-4 եւ 7-5 արդիւնքով պարտութիւն մը կրեց այս մրցաշարքին թիւ 1 դասւած ամերիկացի Փիթ Սամփրասէն: Մրցումին արդիւնքը ցոյց կու տայ, որ Սարգսեան այդքան ալ սկար մրցակից մը չեղաւ Սամփրասի համար, սակայն ամերիկացին իր լաւ խաղարկութեամբ անգամ մը եւս փաստեց, որ կը մնայ տիտղոսին գլխաւոր թեկնածուն:

Գ. հանգրուանին Սամփրաս իր դէմ պիտի ունենայ 15րդ դասուած գուլիցերիացի Ռոմէ Ֆետերէրը:

Ստորեւ՝ Գ. հանգրուանի կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները.

● ՏՂԱՐՔ

Փիթ Սամփրաս (Մ. Ն.)

- ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ) 6-4, 6-4 եւ 7-5

Մարաք Սաֆիլի (Ռուսիա) - Տէվիտ Փրի-

նոսի (Գերմանիա) 7-6, 6-3, 5-7, 1-6 եւ 6-3

Ռոմէ Ֆետերէր (Ջուլիցերիա) - Եոնաս Պիթրման (Շուէտ) 7-6, 6-3 եւ 7-6

Կրեկ Ռուգեաքի (Բրիտանիա) - Խուան Քարլոս Ֆելեքս (Սպանիա) 6-1, 6-4 եւ 6-4



Սարգիս Սարգսեան



Անըր Հուպեր

● ԱՂՋԻԿՆԵՐ

Սերեյա Ուլիլովս (Մ. Ն.) - Էմանուէլ Քակ-

իարտի (Ջուլիցերիա) 6-1 եւ 6-2

Ճեյմս Բափրիաքի (Մ. Ն.) - Թարիանա Փա-

նովա (Ռուսիա) 6-4 եւ 6-3

Անըր Հուպեր (Գերմանիա) - Էլենա Տեմն-

քիւս (Ռուսիա) 6-0 եւ 6-2

Քոնէլիա Մարքիեւս (Սպանիա) - Լիլիա Օս-

թերի (Մ. Ն.) 6-2 եւ 6-3

ՄԵՔՍԻՔԱՅԻ ՄԱՐԶԻԶՐ ՀՐԱԺԱՐԵՑԱԻ

Իր կազմին կրած վերջին պարտութենէն ետք Մեքսիքայի մարզիչ Էնրիքէ Մեզա ներկայացուց իր հրաժարականը, տասը ամիս իր պաշտօնին վրայ մնալէ ետք: Ան անցեալ Սեպտեմբերին նշանակուած էր մարզիչ, փոխարինելով Մանուէլ Լափուէնթէն:


Քոնքաքաֆի գոտիէն ներս տեղի ունեցող 2002ի Մոնտրալի գոտեմի մրցումներուն, Մեքսիքա 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Հոնոուրաբլէ, դժուարացուց իր յոյսերը ծափոն եւ շարունակեց Քորէա իր տոմար ապահովելու համար: Անիկա այժմ կը գրաւէ ծրր դիրքը (4 կէտով), եօթը կէտով ետ մնալով պարագլուխի դիրքը գրաւող Միացեալ Նահանգներէն, որ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Թրինիտադը եւ Թոպիկոն:

Քոնքաքաֆի գոտեմի մրցումները արդէն իսկ կտրած են իրենց կէտ ճամբան եւ վեց խումբերը տակաւին 5ակում մրցում ունին կատարելիք: Նշենք, թէ առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը կ'ապահովեն Մոնտրալի աւարտական հանգրուանին իրենց տոմարը:

Իր կատարելիք յաջող մրցումին, Մեքսիքա դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ վաղը՝ կիրակի հիւրընկալի իմբակին պարագլուխի դիրքը գրաւող Միացեալ Նահանգները:

Իր կրած այս վերջին պարտութենէն ետք, այսպիսով Մեքսիքա կրեց յաջողակաւ իր 6րդ պարտութիւնը:

Մեքսիքայի ֆուլթայլի ֆետերատիոնի պատասխանատուները յայտնե-



Էնրիքէ Մեզա

Ստորեւ՝ գաստրոնոմիք

1.- Մ. Նահանգներ	4ԿՏ
2.- Զոսթա Ռիքա	13 (7-1)
3.- Հոնոուրա	10 (9-5)
4.- Ժամայքա	8 (11-8)
5.- Մեքսիքա	5 (3-6)
6.- Թրինիտադ	4 (7-8)
	1 (3-11)

ՎԱՆ ՊՈՒՅԹԸՆ ՀԱՆԴԻՍԱՑԱԻ ՊԵԼՃԻՔԱՑԻ ԱՄԷՆԷՆ ՍՈՒՂ ՖՈՒԹՊՈԼԻՍԸ

Սթանտար Լիէմի յետապահ Տանիէլ Վան Պոյթըն հանդիսացաւ պէլճիքայի ամենէն սուղ ֆուլթայլիստը, Պելճիքայի ֆուլթայլի պատմութեան մէջ հաստատելով փոխանցման նոր մրցանիշ մը՝ 19 միլիոն տոլար: Ան փոխանցուեցաւ Մարսիլի:

23 տարեկան Վան Պոյթըն երկու տարի առաջ Շարլըրուայէն Սթանտար Լիէմ փոխանցուած էր փոխան 318 հազար տոլարի միակ:

Ըստ ֆրանսական մամուլին՝ Մարսիլ ձեռք ձգած է նաեւ Պորտուգալ Տորթուզի չէխ յառաջապահ Եան Քոլլըրը, որ նոր փոխանցուած էր Մարսիլի:

Նշենք, որ Մարսիլի նախագահ Ռոպէր Լուի - Տրէյ-ֆիւս նաեւ գլխաւոր սեփականատէրներէն մէկն է Սթանտար Լիէմի:

Վան Պոյթըն, որ մաս կը կապմէ Պելճիքայի ազգային խումբին, կը նկատուի աշխարհի լաւագոյն կէդրոնի յետապահներէն մէկը, հակառակ փոքր տարիքին եւ անփորձութեան: Այսուհանդերձ ան փաստօրէն կը հանդիսանայ աշխարհի երկրորդ կէդրոնի յետապահը, որ այսքան մեծ գումարի փոխանցումի կ'արժանանայ, Լիէմի յետապահ Ռիօ Ֆերտինանտէն ետք, որ փոխանցուած էր Ուէսթ Համին:

ՖՈՒԹԲՈԼ

ՎԱՂԸ՝ ՄԱՆՅԻ ՔՈՒՐԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Վաղը՝ Կիրակի Ֆրանսայի մէջ տեղի կ'ունենայ Ֆորմիլա Ի Մանի Քուրի կրան փրին, որ պիտի ըլլայ աշխարհի ախոյեանութեան 10րդ հանգրուանը:

Մաքլարընի վարորդ բրիտանացի Տէյվիտ Քուլթարտ, որ երէկուան փորձերուն արձանագրեց լաւագոյն արդիւնքը (1' 14" 935), յայտարարեց, թէ հակառակ անոր որ կը գրաւէ ընդհանուր դասաւորման 2րդ դիրքը 24 կէտով ետ մնալով պարագլուխի դիրքը գրաւող Ֆետարիի գերմանացի վարորդ Միքայէլ Շումախըրէն, սակայն տակաւին յոյս ունի աշխարհի ախոյեան հանդիսանալու: Ան ըսաւ, թէ վաղեան կրան փրին պիտի փորձէ անպայման յաղթանակ մը արձանագրել՝ վերստին պայքարի մէջ մտնելու համար Շումախըրի հետ: Նշենք, թէ ան անցեալ տարի շահած էր Մանի Քուրի կրան փրին:

Շումախըր, որ երէկ հանդիսացաւ 6րդ, այսօր իր ամէն կարելին պիտի ընէ փոյ փոյիշընի առաջին դիրքին վրայ գտնուելու համար, բան մը, որ այս տարի ցարդ յաջողած է եօթը անգամ կատարել, մինչ Քուլթարտ՝ երկու անգամ:

Մանի Քուրի կրան փրին նախօրեակին վարորդներուն եւ ինքնաշարժներուն դասաւորումը այժմ կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

1. Միքայէլ Շումախըր (Գերմանիա) Ֆետարի	Կէտ
2. Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա)	68
3. Մարսիլի Պարիքէլլո (Պրայիլ) Ֆետարի 26	Մաքլարըն 44
4. Ռալֆ Շումախըր (Գերմանիա)	26
5. Խուան Փալլո Մոնթոյա (Քոլումպիա)	Ուիլիամս 25
	Ուիլիամս 12

ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒ ԴԱՍԱԻՌՈՐՈՒՄ.	Կէտ
1. Ֆետարի	94
2. Մաքլարըն	53
3. Ուիլիամս	37
4. Մաուպըր	15
5. Ճորտան	13

ՖՈՒԹՊՈԼԻ ԵՐԻՏՐԱՍԱՐԳՆԵՐՈՒՄՈՆՏԻԱԼ

Աշխարհի երիտասարդներու Մոնտրալին (20 տարեկանէն վար) Բ. հանգրուանի մրցումներուն, Հոնոուրա, որ գոտեմիթիւն ունեցած էր Ա. հանգրուանին իր կատարած մրցումներուն ընթացքին, 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Անկոյան, ապահովեց քառորդ աւարտականին իր տոմարը:

Ա. կիսախաղին 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք, Պարսեյոնայի նախկին մարզիչ՝ Լուիս Վան Կապի կազմը Բ. կիսախաղին երկու կոյ նշանակեց Անկոյայի բերդէն ներս եւ Չեխիոյ, Փարակուէյի եւ Ղանայի հետ կրցաւ ապահովել քառորդ աւարտականին իր տոմարը:

Չեխիա 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Քոսթա Ռիքան, Փարակուէյ՝ Ուէրանիան (2-1), իսկ Ղանա՝ Էքուատորը (1-0):

ՊՈՒՔԱ ԺՈՒՆԻՈՐԶ ՏԻՐԱՑԱԻ ԼԻՊԵՐԹԱՏՈՐԷՍ ԲԱԺԱԿԻՆ

Արժան

